



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/7238/05/22

Նախագահող դատավոր՝ Ռ. Մախմուդյան

Դատավորներ՝

Կ. Ավետիսյան

Ս. Հովակիմյան

Վարչական գործ թիվ ՎԴ/7238/05/22
2025թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

զեկուցող

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ

2025 թվականի դեկտեմբերի 15-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.09.2024 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «Գնթունիք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ 13.10.2022 թվականի թիվ 4218521 արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 13.10.2022 թվականի թիվ 4218521 արձանագրությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 20.06.2023 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.09.2024 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.06.2023 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հերքել փաստարկներով.

Սույն գործով կատարված հսկիչ գնման համար հիմք է հանդիսացել 31.08.2022 թվականին էլեկտրոնային հաղորդագրության տեսքով ստացված բողոքը, որով նամակի հեղինակն անդրադարձել է նաև Ընկերությանը՝ նշելով, որ Ընկերությանը պատկանող սուպերմարկետում տրվող կտրոնները չեն պարունակում ֆիսկալ համար, և խնդրել է ստուգել դրանց վավերությունը: Նշվածն էլ հենց հիմք է հանդիսացել համապատասխան հանձնարարագրի հրապարակման և հարկային ուսումնասիրության իրականացման համար:

Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ «Բողոք» վերտառությամբ գրությունն արտացոլող փաստաթուղթը չի կարող դիտարկվել վերաբերելի, քանի որ այդ փաստաթղթում շարադրված տեղեկությունները՝ առանց դրանց արժանահավատությունը հավաստող փաստաթղթերի կամ տեղեկությունների առկայության, չեն կարող հիմք հանդիսանալ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կիրառման և այդ հիմքով արտագնա հարկային ուսումնասիրության տեսակ հանդիսացող հսկիչ գնում իրականացնելու համար, ինչպես նաև արձանագրել է, որ յուրաքանչյուր նման իրավիճակում հարկային մարմինը որևէ հնարավոր եղանակով պետք է պարզի՝ արդյո՞ք վերոնշյալ փաստաթղթում դրանք հայտնաձև անձի կողմից մատնանշված գործողություններն իրականում տեղի են ունեցել, թե՛ ոչ:

Մինչդեռ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հսկիչ գնման համար հիմք հանդիսացող տեղեկությունները ձեռք են բերվում ոչ թե հարկային մարմնի կողմից՝ իրեն վերապահված գործիքակազմի գործադրման միջոցով, այլ տրամադրվում են երրորդ անձանց կողմից, որոնց անհնար է առաջադրել իրենց կողմից տրամադրված տեղեկությունը հիմնավորելու պահանջ:

Բացի այդ, ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ մասը, որպես հանձնարարագրի հրապարակման հիմք նախատեսում է հնարավոր խախտման վերաբերյալ տեղեկատվության ստացումը, ինչպես նաև անիրավաչափ է հանձնարարագրի հրապարակման իրավական հիմքին առաջադրել հիմնավորվածության այնպիսի պահանջ, ինչպիսին առաջադրվում է գրավոր վարչական ակտին:

Հանձնարարագրի հրապարակման իրավական հիմքը հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտման դիմաց է, որը, ինքնին, որպես իրավաբանական փաստ, իրավական հետևանք չի առաջացնում

տնտեսվարող սուբյեկտի համար, հանձնարարագրի հրապարակման իրավական հիմք հանդիսացող խախտման դիմելը ենթակա է հարկային հսկողության ընթացքում ստուգման և միայն հաստատվելու, այսինքն՝ անձի կողմից հարկային հսկողության շրջանակներում խախտում թույլ տալու պարագայում է անձը ենթակա հարկային պատասխանատվության:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.09.2024 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցն ամբողջությամբ մերժել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի նամականիների էլեկտրոնային հասցեին՝ secretariat@petekamutner.am, 31.08.2022 թվականին ուղարկվել է «Բողոք» վերտառությամբ էլեկտրոնային նամակ, որում նշված է եղել հետևյալը. «Հարգելի ՊԵԿ աշխատակից, ներկայացնում եմ Գնթունիք սուպերմարկետի և (գրառումը փակված է) կտրոնները: Առաջինը չի պարունակում ֆիսկալ համար: Խնդրում եմ պարզաբանել՝ արդյոք ներկայացված կտրոնը վավեր է: (Գրառումը փակված է) տված կտրոնը ևս չի պարունակում ֆիսկալ համար, միայն իմ պահանջելուց հետո սեղանի տակ ինչ-որ գործողությունների արդյունքում տվել են նորմալ կտրոն: Դրանում կարող եք համոզվել՝ նայելով կտրոնների տպման թուղթերի տարբերությունը: Խնդրում եմ լինել հետևողական, քանի որ (գրառումը փակված է) դրա հետ կապված ես մի քանի անգամ դիմել եմ ձեզ, բայց խանութի աշխատանքում ոչինչ չի փոխվել: Անընդհատ հերթերով առևտուր են անում՝ առանց կտրոն տալելու: Նախ կտրոնը չեն տալիս, եթե պահանջում ես՝ տալիս են առանց ֆիսկալ համարի, երկրորդ անգամ իրական կտրոնը պահանջելուց հետո նոր միացնում են իրենց սարքավորումներն ու տպում կտրոնը: Եթե աշխատուժի պակաս ունեք, որպեսզի զբաղվեք այս հարցերով, կարող եմ որպես կամավոր օգնել ձեզ: Հարգանքով՝ (գրառումը փակված է)» **(հատոր 1-ին, գ.թ.59-60):**

2) Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության պետի 05.09.2022 թվականի թիվ 4218521 հանձնարարագրով Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն վարչության ընթացիկ հատուկ հսկողության թիվ 4 բաժնի հարկային տեսուչներին հանձնարարվել է Ընկերությունում իրականացնել հսկիչ գնում՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների համար սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանումն ուսումնասիրելու նպատակով. հանձնարարագրում որպես հսկիչ գնման իրականացման իրավական հիմք նշվել է ՀՀ հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածը, 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը **(հատոր 1-ին, գ.թ. 30-31):**

3) Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 13.10.2022 թվականի թիվ 4218521 արձանագրության համաձայն՝ գլխավոր հարկային տեսուչ Սպարտակ Աստվածատրյանի կողմից 06.09.2022 թվականին ժամը 15:09-ին ք. Ապարան, Բաղրամյան 39 հասցեում գտնվող Ընկերությանը պատկանող առևտրի կետում գործող հացամթերքի բաժնից կանխիկ եղանակով կատարվել է գնում՝ 830

ՀՀ դրամի չափով, գումարը չի մուտքագրվել հսկիչ դրամարկղային մեքենա և չի տրամադրվել համապատասխան գումարի հսկիչ դրամարկղային կտրոն:

Վերոգրյալի արդյունքում թիվ 4218521 արձանագրությամբ Ընկերությանը գանձման է առաջադրվել ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափով տուգանք (**հատոր 1-ին, գ.թ. 10-14, գ.թ. 34-38**):

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ հարկային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն գործով վճռաբեկ բողոքի քննության շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյո՞ք հարկ վճարողի կողմից կատարված հնարավոր իրավախախտման վերաբերյալ երրորդ անձի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված բողոքը կարող է դիմել որպես բավարար հիմք՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածով սահմանված հսկիչ գնում իրականացնելու համար:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ սահմանադրական դատարանը 30.01.2013 թվականի թիվ ՍԴՈ-1073 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ սեփականության պաշտպանությանն ուղղված սահմանադրական և միջազգային իրավական դրույթները չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ

վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Անդրադառնալով տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի և հարկեր մուծելու ու պետական բյուջե մուտքագրվող այլ վճարումներ կատարելու պարտականության սահմանադրաիրավական բովանդակությանը՝ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունն իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն է ապահովում անձանց (տնտեսավարող սուբյեկտների) համար ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքն օրենքով չարգելված տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Միաժամանակ, այդ ազատության սկզբունքը բացարձակ չէ և ինչպես պետության, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների առջև դնում է կոնկրետ պարտականություններ: Այսպես, պետության հիմնական գործառույթն է ապահովել այդ ազատության երաշխավորման անհրաժեշտ իրավական և տնտեսական պայմաններ, իսկ տնտեսավարող սուբյեկտների պարտականությունն է իրենց գործունեությունը ծավալել օրենսդրությամբ սահմանված կարգով ու շրջանակներում, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով ու չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Այն սահմանադրաիրավական պարտականություն է, որը պայմանավորված է հասարակության ու պետության համար դրա կենսական կարևորությամբ ու նշանակությամբ (*տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 18.02.2014 թվականի թիվ ՍԴՈ-1139 որոշում*):

ՀՀ վճարել դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների սահմանումը և նշված դրամական պարտավորությունների պատշաճ կատարումը պետության ֆինանսատնտեսական առումով կայունության երաշխիքներից մեկն է, որի հաշվառմամբ էլ պետությունը լիարժեք իրավասու է իրավական հարկադրանքի միջոցների դիմելու օրենքով նախատեսված հիշյալ պարտականությունը չկատարելու պարագայում, որպիսի լիազորության իրացումն ամենևին չի հանգեցնում անձի սեփականության իրավունքի խախտման, իսկ իրավական հարկադրանքի միջոցի սահմանումն օրենսդրական կարգավորումներով հստակ նախատեսված ընթացակարգի, մասնավորապես՝ իրավասու մարմինների կողմից իրականացված ստուգումների հետևանքն է (*տե՛ս, «ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ թիվ ՎԴ/5980/05/20 վարչական գործով ՀՀ վճարել դատարանի 07.04.2025 թվականի որոշումը*):

Հարկային հարաբերությունների, այդ թվում՝ հարկային հսկողության իրավական կարգավորումն իրականացվում է ՀՀ հարկային օրենսգրքով:

Այսպես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 328-րդ հոդվածի համաձայն՝

1. Հարկային հսկողությունը հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողությունն է՝ հարկային մարմինն վերապահված լիազորությունների շրջանակներում հարկային մարմնի (պաշտոնատար անձանց)՝ Օրենսգրքով նախատեսված գործողությունների ամբողջությունը: Օրենսգրքի կիրառության իմաստով՝ հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտեր են համարվում Օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը, ինչպես

նաև այն իրավական ակտերը, որոնց պահանջների կատարման նկատմամբ հսկողության լիազորություններն այդ իրավական ակտերով վերապահված են հարկային մարմնին:

2. Հարկային հսկողության նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումների կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված դեպքերում ու կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը, այդ թվում՝ ինքնուրույն հաշվարկելն ու վերահաշվարկելը, ինչպես նաև հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Հարկային հսկողությունն իրականացվում է հետևյալ եղանակներով՝

1) հարկային ստուգումներ.

2) հարկային ուսումնասիրություններ.

3) հարկային վարչարարության շրջանակներում իրականացվող՝ Օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ գործողություններ:

Օրենսգրքի 343-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Հարկային ուսումնասիրությունը հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում սույն գլխով սահմանված կարգով իրականացվող ընթացակարգ է, որի նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, սույն բաժնով սահմանված դեպքերում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված կարգով հարկային պարտավորությունների առաջադրումն ու հայտնաբերված խախտումների համար պատասխանատվություն կիրառելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Հարկային հսկողության շրջանակներում հարկային ուսումնասիրություններն իրականացվում են հետևյալ եղանակներով.

1) կամերալ (ներքին)՝ հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով բացառապես հարկային մարմնում սույն գլխով սահմանված կարգով իրականացվող ուսումնասիրություն.

2) արտագնա՝ հարկային մարմնի լիազորությունների շրջանակներում հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով սույն գլխով սահմանված կարգով հարկ վճարողի մոտ իրականացվող ուսումնասիրություն:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝

3. Հարկային հսկողության շրջանակներում արտագնա հարկային ուսումնասիրությունների տեսակներն են.

1) հսկիչ գնումը:

Նույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝

5. Հարկային ուսումնասիրությունների արդյունքում հարկային պարտավորություններ չեն առաջանում, բացառությամբ հետևյալ դեպքերի.

3) հսկիչ գնման արդյունքում արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների գրանցման կարգի՝ Օրենսգրքի 414-րդ հոդվածով սահմանված խախտումներ կամ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների՝ Օրենսգրքի 416-րդ հոդվածով սահմանված խախտումներ հայտնաբերելու դեպքում:

Նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն՝

13. Սույն հոդվածի 5-րդ մասի 2-6-րդ և 8-րդ կետերով սահմանված դեպքերում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ արձանագրություններով առաջադրվում են հարկային պարտավորություններ, և կիրառվում է Օրենսգրքով ու օրենքներով սահմանված պատասխանատվություն (...):

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Հարկ վճարողի հարկման օբյեկտների, հարկման բազաների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման), հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման, հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների, արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների գրանցման, ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման, «Անկանխիկ գործառնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում ու կարգով վճարային քարտերով անկանխիկ վճարումներ չընդունելու, այդ թվում՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորություն չապահովելու կամ կանխիկ դրամով գումարի ընդունման սահմանափակումները չապահովելու, ինչպես նաև արժույթային գործարքների իրականացման համար սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանման նկատմամբ ուսումնասիրության նպատակով հարկային մարմինը կարող է իրականացնել հսկիչ գնում (գնումներ):

Նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝

2. Հսկիչ գնման իրականացման համար հիմք կարող են հանդիսանալ՝

4) հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ հարկային մարմին ներկայացվող (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) տեղեկությունները:

Վերոգրյալ իրավական նորմերի համալիր վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկային հսկողության շրջանակներում իրավասու պետական մարմինն իրականացնում է նաև հարկային ուսումնասիրություն, որի տեսակ է հանդիսանում նաև հսկիչ գնումը: Հսկիչ գնման իրականացման համար, ի թիվս այլնի, հիմք կարող են հանդիսանալ նաև հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ հարկային մարմին ներկայացվող տեղեկությունները: Ընդ որում, նման տեղեկություններ կարող են ներկայացվել նաև երրորդ անձանց կողմից:

Անդրադառնալով հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ երրորդ անձանց կողմից հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելու՝ օրենսդրի կողմից սահմանված հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նման հնարավորության նախատեսումը պայմանավորված է հարկաբյուջետային

քաղաքականության համալիր բնույթով, մասնավորապես, երրորդ անձինք անմիջական մասնակցություն ունեն հարկային հարաբերությունների ձևավորմանը, ինչպես նաև վերջիններս կրում են հարկային ողջ գործընթացների ուղղակի ազդեցությունը: Նշված հանգամանքով պայմանավորված՝ վերջիններս օժտվել են ակտիվ դերակատարությամբ՝ պետության կողմից տնտեսության պետական կարգավորման կարևորագույն գործառույթին նպաստելու նպատակով:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ երրորդ անձանց կողմից ներկայացված տեղեկությունը պետք է բավարար լինի հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջները հարկ վճարողի կողմից խախտելու հավանականությունն արձանագրելու համար: Մասնավորապես, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարկային մարմինը, երրորդ անձից ստանալով հարկ վճարողի կողմից կատարված որևէ հնարավոր խախտման վերաբերյալ տեղեկություն, պետք է գնահատման առարկա դարձնի այդ տեղեկությունը, որից հետո հարկ վճարողի մոտ օրենսդրական պահանջների խախտման ռիսկի վերաբերյալ եզրահանգման գալու պարագայում կարող է հարկային հսկողության շրջանակներում Օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով հսկիչ գնում իրականացնել:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 13.10.2022 թվականի թիվ 4218521 արձանագրությունը:

Դատարանը 20.06.2023 թվականի վճռով հայցը բավարարել է այն հիմնավորմամբ, որ. «(...) Պետական եկամուտների կոմիտեի նամականիների էլեկտրոնային հասցեին ուղարկված 01.09.2022 թվականի առանց ուղարկող անվանման, «Բողոք» վերնագրով նամակը (...) Դատարանի գնահատմամբ չի կարող գնահատվել որպես ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված փաստական հիմքի առկայությունը հավաստող պարզաճ փաստաթուղթ:

Մասնավորապես, նշված փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես թույլատրելի ապացույց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն որևէ տեղեկություն չի պարունակում այն անձի մասին, ով է հայտնել տեղեկություն՝ խախտումների վերաբերյալ, այն տեղեկություն չի պարունակում այն մասին, թե երբ է խախտումը արձանագրվել դրա մասին տեղեկություն հայտնող երրորդ անձի կողմից: Նշված փաստաթուղթը չի պարունակում նաև տեղեկություն այն կազմողի մասին, փաստաթղթի վրա առկա չէ որևէ ստորագրություն:

Մինչդեռ, հանձնարարագրում ՀՀ հարկային օրենսգրքի համապատասխան նորմի մարնանշումը՝ առանց այդ հիմքերի առկայության, չի կարող համարվել ՀՀ հարկային օրենսգրքի 343-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետով սահմանված պահանջի պահպանում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը հանգում է այն եզրակացության, որ վիճարկվող վարչական ակտը կայացվել է ՀՀ հարկային օրենսգրքի վերը նշված պահանջների խախտմամբ, այն է՝ հանձնարարագիրը տրվել է ՀՀ հարկային օրենսգրքի պահանջների խախտմամբ, քանի որ հսկիչ գնումն իրականացվել է առանց սահմանված հիմքերի,

հետևաբար վիճարկվող արձանագրությունը ոչ իրավաչափ է և ենթակա է անվավեր ճանաչման:

Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ Պատասխանողի կողմից ներկայացված վիճարկվող վարչական ակտի կայացման կապակցությամբ իրականացված վարչական վարույթի նյութերով չի հիմնավորվում 06.09.2022 թվականին ժամը 15:09-ին «Գնթունիկ» ՍՊԸ-ին պատկանող ք.Ապարան, Բաղրամյան 39 հասցեում գտնվող առևտրի կետից Պատասխանողի կողմից վարչական ակտում նշված՝ 830 ՀՀ դրամի չափով գնում կատարած լինելու, հետևաբար և ՀԴՄ կրորոն չտրամադրելու փաստը (...), տվյալ պարագայում, դատաքննությամբ Դատարանին տրամադրված ապացույցների ցանկում առկա չէ որևէ ապացույց, որով կարող է հաստատվել այն վիճելի փաստը, որ Պատասխանողի կողմից Հայցվորի մոտ իրականացվել է 830 ՀՀ դրամի չափով գնում (...):»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, պատճառաբանել է, որ. «(...) Ողջ վերոգրյալի արդյունքում ստացվում է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով հսկիչ գնում իրականացնելու դեպքում հարկային մարմինը պարտավոր է ապացուցել հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ հարկային մարմին ներկայացվող (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) տեղեկությունների առկայության, բացի այդ, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ այդպիսի տեղեկությունների հավաստի լինելու հանգամանքը, որը և կարող էր հիմք հանդիսանալ հսկիչ գնում տեսակի հարկային ուսումնասիրություն կատարելու համար, իսկ նման փաստը չապացուցելու պարագայում դրա բացասական հետևանքները պետք է նույնպես կրի հարկային մարմինը:

(...) Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով սույն վարչական գործում առկա մնացյալ ապացույցները, այդ թվում, ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված նյութերը, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ, թեև հանձնարարագրում, որպես հսկիչ գնման իրավական հիմք, նշվել է նույն օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, սակայն պատասխանողի կողմից Դատարան ներկայացված նյութերում, ինչպես նաև ողջ վարչական գործում առկա չէ նշված իրավական հիմքի կիրառման համար որևէ պատշաճ ապացույց:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործում առկա ապացույցներով չի հաստատվում նույն օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հիմքը կիրառելու համար անհրաժեշտ փաստական և առկայությունը, որի բացասական հետևանքները ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի ուժով կրում է վարչական մարմինը:

(...) Ինչ վերաբերում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Դատարան ներկայացված, սույն գործով վիճարկվող՝ 13.10.2022թ. թիվ 4218521 արձանագրության կազմման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերում առկա և վերջինս կողմից Վերաքննիչ դատարան ներկայացված վերաքննիչ բողոքում մատնանշված՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նամականիների էլեկտրոնային հասցեին՝ secretariat@petekamutner.am, 31.08.2022թ. ուղարկված «Բողոք» վերառաջությամբ գրությունն (գրությունն ուղարկողի վերաբերյալ տվյալները փակված են) արտացոլող փաստաթղթին (գ.թ.59-60), ապա դրա ուսումնասիրման արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ միայն նշյալ փաստաթղթում շարադրված տեղեկությունները՝ առանց դրանց

արժանահավատությունը հավաստող փաստաթղթերի կամ տեղեկությունների առկայության, չեն կարող հիմք հանդիսանալ ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կիրառման և այդ հիմքով արտագնա հարկային ուսումնասիրության տեսակ հանդիսացող հսկիչ գնում իրականացնելու համար. ի վերջո հարկ է արձանագրել, որ յուրաքանչյուր նման իրավիճակում հարկային մարմինը որևէ հնարավոր եղանակով պետք է պարզի՝ արդյո՞ք վերոնշյալ փաստաթղթում դրանք հայտնաձև անձի կողմից մատնանշված գործողությունները իրականում տեղի են ունեցել, թե՛ ոչ, քանի որ հակառակ դեպքում հնարավոր է մի իրավիճակ, երբ նշյալ տեղեկությունները չհամապատասխանեն իրականությանը և լինեն մտացածին, որպիսի տեղեկությունների հիման վրա էլ արդեն, հարկային ծառայողների կողմից, ոչ իրավաչափորեն, համապատասխան տնտեսվարող սուբյեկտի մոտ կիրականացվի հարկային ուսումնասիրության տեսակ հանդիսացող հսկիչ գնում, ինչն արդեն, տվյալ դեպքում, անթույլատրելի է: Նման պայմաններում արդեն, վերոգրյալի հաշվառմամբ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նամականիների էլեկտրոնային հասցեին՝ secretariat@petekamutner.am, 31.08.2022թ. ուղարկված «Բողոք» վերառությամբ գրությունն (գրությունն ուղարկողի վերաբերյալ տվյալները փակված են) արտացոլող փաստաթուղթը չի կարող համարվել որպես ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված հիմքի առկայությունը հիմնավորող ապացույց (...):»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի նամականիների էլեկտրոնային հասցեին (secretariat@petekamutner.am) 31.08.2022 թվականին ուղարկված «Բողոք» վերառությամբ էլեկտրոնային նամակով երրորդ անձի կողմից ներկայացվել է տեղեկություն այն մասին, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնների խախտումներով, մասնավորապես՝ Ընկերությանը պատկանող առևտրի կետում գնում կատարելուց հետո չեն տրամադրվում հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններ կամ տրամադրվում են առանց կտրոնի ֆիսկալ համարի:

Նշվածն ընդունելով որպես հարկային մարմին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ հարկային մարմին երրորդ անձից ներկայացված տեղեկություն՝ Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության պետի կողմից 05.09.2022 թվականին տրվել է թիվ 4218521 հանձնարարագիրը՝ Ընկերությունում հսկիչ գնում իրականացնելու նպատակով: Նշված հանձնարարագրի հիման վրա Կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն վարչության աշխատակիցներն Ընկերությունում իրականացրել են հսկիչ գնում, որի արդյունքում 13.10.2022 թվականին կազմված թիվ 4218521 արձանագրությամբ արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Սպարտակ Աստվածատրյանի կողմից 06.09.2022 թվականին ժամը 15:09-ին ք. Ապարան, Բաղրամյան 39 հասցեում գտնվող Ընկերությանը պատկանող առևտրի կետում գործող հացամթերքի բաժնից կանխիկ եղանակով կատարվել է գնում՝ 830 ՀՀ դրամի չափով,

գումարը չի մուտքագրվել հսկիչ դրամարկղային մեքենա և չի տրամադրվել համապատասխան գումարի հսկիչ դրամարկղային կտրոն:

Կատարված իրավախախտման համար Ընկերությանը գանձման է առաջադրվել Օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափով տուգանք:

Անդրադառնալով Կոմիտեի նամականիների էլեկտրոնային հասցեին (secretariat@petekamutner.am) ուղարկված «Բողոք» վերտառությամբ էլեկտրոնային նամակը որպես հարկային մարմին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հնարավոր խախտումների վերաբերյալ հարկային մարմին երրորդ անձի կողմից ներկայացված տեղեկության պատշաճ աղբյուր դիտարկելու, իսկ դրանով հայտնած տեղեկությունները հսկիչ գնման կատարման հիմքում դնելու իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ երրորդ անձի կողմից ներկայացված տեղեկության և այդ տեղեկությունը ներկայացնելու ձևի հավաստի ու պատշաճ լինելու հանգամանքը ենթակա է գնահատման յուրաքանչյուր գործով առանձին: Հարկային մարմինը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է դիտարկման առարկա դարձնի երրորդ անձի կողմից հայտնած հանգամանքները, որոնց գնահատման հիման վրա որևէ հարկ վճարողի մոտ օրենսդրական պահանջների խախտման *ռիսկի* վերաբերյալ եզրահանգման գալու պարագայում հարկային մարմինը կարող է հարկային հսկողության շրջանակներում հսկիչ գնում իրականացնել:

Ընդ որում, սույն դեպքում Ընկերության մոտ հսկիչ գնման իրականացման հանձնարարագիրը տրամադրելու հիմքի՝ Օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կարգավորումից ուղղակիորեն բխում է, որ հարկային մարմին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումների վերաբերյալ հարկային մարմին ներկայացվող տեղեկությունը վկայում է ոչ թե հաստատված և ստույգ, այլ *հավանական* խախտումների մասին: Եվ միայն հարկային մարմնի կողմից հարկային հսկողության շրջանակներում համապատասխան գործողությունների իրականացման արդյունքում է հնարավոր դառնում հաստատել կամ հերքել երրորդ անձի կողմից հայտնած խախտումների առկայությունը:

Սույն դեպքում ուսումնասիրելով Կոմիտեի կողմից ներկայացված վարչական վարույթի նյութերում առկա Կոմիտեի նամականիների էլեկտրոնային հասցեին (secretariat@petekamutner.am) ուղարկված «Բողոք» վերտառությամբ էլեկտրոնային նամակի արտատպվածքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն ուղարկվել է Կոմիտեի պաշտոնական էլեկտրոնային փոստին, ամփոփ բովանդակում է հարկ վճարող սուբյեկտի կողմից հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների հավանական խախտման վերաբերյալ տեղեկություն, ինչպես նաև նամակին կից ֆայլով ներկայացվել են հավանական խախտման մասին վկայող հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնների էլեկտրոնային օրինակները: Նշվածի համադրված գնահատման արդյունքում Կոմիտեն ներկայացված տեղեկությունն իրավաչափորեն բավարար է դիտարկել Ընկերության մոտ հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջները խախտելու հավանականությունն արձանագրելու համար:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Կոմիտեի նամականիների էլեկտրոնային հասցեին (secretariat@petekamutner.am) ուղարկված «Բողոք» վերտառությամբ էլեկտրոնային նամակի պատշաճ ապացույց համարվելու հարցին, արձանագրում է հետևյալը.

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկով անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 27-րդ և 124-րդ հոդվածների իրավանորմների համակցված վերլուծությանը, արձանագրել է, որ ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ապացույցների գնահատումը՝ որպես ապացուցման գործընթացի տարր, մտավոր, տրամաբանական գործունեություն է, որի արդյունքում դատարանի կողմից եզրահանգում է արվում ապացույցներից յուրաքանչյուրի թույլատրելիության, վերաբերելիության, հավաստիության և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքների բացահայտման համար ապացույցների համակցության բավարարության մասին:

Վարչադատավարական օրենսդրության համաձայն՝ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները գնահատում է ներքին համոզմամբ, որը պետք է հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել նաև, որ թեև ներքին համոզմունքը սուբյեկտիվ կատեգորիա է, այդուհանդերձ, օրենսդիրն այն դիտարկում է որպես ապացույցների գնահատման միջոց, որը հանգեցնում է իրավական գնահատականների, հետևաբար և դատավարական օրենսդրությամբ նախատեսել է դրա օբյեկտիվության ապահովմանն ուղղված որոշակի երաշխիքներ, մասնավորապես՝

1) որպես դատարանի ներքին համոզմունքի օբյեկտիվ հիմք պետք է հանդիսանա գործում եղած ամեն մի ապացույցի և ապացույցների համակցության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունը,

2) դատարանն ազատ է ապացույցների գնահատման գործում:

Ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ դատարանը կաշկանդված չէ տվյալ ապացույցին գործին մասնակցող և այլ անձանց տված գնահատականներով և արտահայտած կարծիքներով:

Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը միայն այն դեպքում կարող է համարվել պատշաճորեն պատճառաբանված, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը:

Այսպիսով, ապացույցների գնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզմունքն իրավական նշանակություն է ստանում և օբյեկտիվացվում դատական ակտերին ներկայացվող՝ հիմնավորվածության և պատճառաբանվածության օրենսդրական պահանջի միջոցով:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը, որը դատական ապացուցման գործընթացում, մասնավորապես, դրսևորվում է կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ պահանջելու վարչական դատարանին ընձեռված իրավական հնարավորությամբ (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդված) *(տե՛ս, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Շիրակի տարածքային ստորաբաժանման թիվ ՎԴ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը)*:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը դատարանը պարզում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույցների, այդ թվում՝ գրավոր ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով և անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, դատարանը որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, ամրագրել է կողմի պարտականությունը՝ դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները: Միևնույն ժամանակ, օրենսդիրն ամրագրել է նաև ապացույցներ ներկայացնելու հատուկ կանոն, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը, ինչպես նաև իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները, ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը կարգավորել է փաստաթղթերի բնօրինակները պարտադիր ներկայացնելու կարգը և դրանք դատարան չներկայացնելու դատավարական հետևանքները: Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 42-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ փաստաթղթերի բնօրինակները պարտադիր ներկայացվում են այն դեպքում, երբ համապատասխան փաստերը, օրենքներին կամ նորմատիվ իրավական այլ ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն բնօրինակով և այն դատարան չներկայացնելու դատավարական հետևանքները հանգում են հետևյալին. դատարանն իր նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակցի միջնորդությամբ, տվյալ ապացույցը կարող է հանել հետազոտման ենթակա ապացույցների շարքից: Այլ կերպ՝ օրենսդիրը սահմանել է գրավոր ապացույցները դատարան ներկայացնելու հնարավոր **երկու տարբերակ՝ բնօրինակով կամ պատճենի ձևով**: Միաժամանակ օրենսդիրը սահմանել է պատճենի ձևով ներկայացված գրավոր ապացույցը հետազոտման ենթակա ապացույցների շարքից հանելու կանոն այն դեպքերում, երբ համապատասխան փաստերը, օրենքներին կամ նորմատիվ

իրավական այլ ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն բնօրինակով: (տե՛ս, Գագիկ Թովմասյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/2680/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):

Հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի հիմնավորվածության հարցին՝ արձանագրելով, որ դատարանը ոչ միայն պետք է նշի այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում դատական ակտ կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին (տե՛ս, Ռազմիկ Մարությանն ընդդեմ Սյրեփան և Անահիտ Մարությանների թիվ 3-54(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ (...) ընդհանուր կանոնի համաձայն՝ գրավոր ապացույցները դատարան կարող են ներկայացվել կա՛մ բնօրինակով, կա՛մ պատշաճ վավերացված պատճենի ձևով: Միևնույն ժամանակ օրենսդիրը վերոնշյալ ընդհանուր կանոնից սահմանել է հետևյալ բացառությունները՝

ա) փաստաթղթերի բնօրինակները պետք է ներկայացվեն բոլոր այն դեպքերում, երբ գործի հանգամանքները, օրենքներին կամ այլ իրավական ակտերին համապատասխան, կարող են հաստատվել միայն նման փաստաթղթերով,

բ) անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է պահանջել ներկայացնելու փաստաթղթերի բնօրինակները: Նման անհրաժեշտություն կարող է, մասնավորապես առաջանալ, երբ գործով ներկայացված միևնույն փաստաթղթի պատճենները տարբերվում են իրենց բովանդակությամբ, և դատարանը չի կարող պարզել գրավոր ապացույցի իրական բովանդակությունն առանց դրա բնօրինակը հետազոտելու: Այդպիսի անհրաժեշտություն կարող է ծագել նաև պատճենի անորակության, դրա իսկության մեջ համոզվելու անհրաժեշտության և այլ դեպքերում (տե՛ս Ղասեմ Աբդուլահ Նեժադն ընդդեմ Աշոտ Հարությունյանի և մյուսների թիվ ԵԱԲԴ/0704/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը):

Վերը նշված իրավական նորմերի դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը կրկին արձանագրում է, որ գրավոր ապացույցները դատարան պետք է ներկայացվեն երկու ձևով՝ կամ որպես բնօրինակ, կամ որպես օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ վավերացված պատճեն: Հետևաբար՝ Դատարանն իրավասու է պահանջել ոչ միայն համապատասխան գրավոր ապացույցների ներկայացում, այլ նաև անհրաժեշտության դեպքում, դրանց բնօրինակները: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այն դեպքում՝ երբ դատարան է ներկայացվում գրավոր ապացույց առանց պատշաճ վավերացման՝ առանց նշման այն մասին, որ այն լիովին համապատասխանում է բնօրինակ էլեկտրոնային փաստաթղթին, նման փաստաթուղթը չի կարող ունենալ օրինական ուժ՝ որպես լիարժեք և վստահելի ապացույց, հատկապես՝ երբ այն գոյություն ունի բացառապես էլեկտրոնային տեսքով:

Վերոգրյալ իրավական վերլուծությունները կիրառելով սույն վարչական գործի փաստական հանգամանքների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեի նամականիների էլեկտրոնային հասցեին (secretariat@petekamutner.am) 31.08.2022 թվականին

ուղարկված «Բողոք» վերտառությամբ փաստաթուղթը հանդիսանում է էլեկտրոնային համակարգից ներբեռնված տվյալների տպագիր տարբերակ, որն առկա է բացառապես էլեկտրոնային տեսքով, սակայն նշված փաստաթղթի պատճենը որևէ կերպ չի վկայում իր իսկության մասին, քանի որ դրա վրա բացակայում են օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացման որևէ նշան՝ այդ թվում՝ պատճենի իսկությունը հավաստող ստորագրություն կամ հաստատում այն մասին, որ այն համապատասխանում է բնօրինակ էլեկտրոնային փաստաթղթին:

Մինչդեռ հաշվի առնելով գործող օրենսդրության և ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումների պահանջները՝ փաստաթուղթը պատճենի տեսքով ներկայացվելու դեպքում այն պետք է պարունակի հստակ հավաստում կամ նշում՝ առ այն, որ ներկայացված պատճենը ճշգրիտ և հավաստի կերպով արտացոլում է բնօրինակի բովանդակությունը: Նման հավաստման բացակայությունը փաստաթուղթը դարձնում է իրավական առումով ոչ պատշաճ՝ որպես լիարժեք ապացույց գործի շրջանակում օգտագործման համար: Այլ կերպ ասած՝ փաստաթուղթը, հանդիսանալով էլեկտրոնային համակարգից տպագրված պատճեն, չունի օրենսդրությամբ սահմանված վավերացման որևէ նշան, ինչը խոչընդոտում է դրա՝ որպես պատշաճ ապացույց գնահատելուն:

Հաջորդիվ՝ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները վերոնշյալ իրավական դիրքորոշման համատեքստում, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Դատարանը, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածով, գործը դատաքննության նախապատրաստելիս հետազոտել է ներկայացված ապացույցները, սակայն հետագայում չի իրազեկել պատասխանողին «Բողոք» վերտառությամբ էլեկտրոնային նամակի պատշաճ ձևով վավերացված տարբերակը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Բացի այդ, ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը չեն հիմնավորել, թե ինչու պատասխանող կողմից չի պահանջվել ներկայացնել փաստաթղթի պատշաճ ձևով վավերացված տարբերակը, հատկապես այն պայմաններում, երբ առկա էին կասկածներ ներկայացված փաստաթղթի հավաստիության վերաբերյալ:

Ամբողջի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները չեն անդրադարձել վարչական վարույթի նյութերին կից ներկայացված՝ «Բողոք» վերտառությամբ էլեկտրոնային նամակի պատճենին և չկատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու պարտականությունը, չեն պահանջել այդ փաստաթղթի պատշաճ ձևով վավերացված տարբերակը, ինչպես նաև Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանների կողմից անդրադարձ չի կատարվել հայցադիմումով նշված վարչական ակտի վիճարկման մյուս հիմքերին:

Վերոգրյալ հիմնավորումներով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է Օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող 345-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի խախտմամբ, ինչի արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների

ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործն ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու համար:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որոնք իրենց նպատակին չեն ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 12.09.2024 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Զեկուցող

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ